



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

18.10.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/39

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի 29.09.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Գազկոմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.09.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի հերթապահ մասի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով թիվ ՀՀՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Գնահատող հանձնաժողովի 04.09.2017թ. ժամը 12:45 կայացած նիստի N3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով մերժվել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորության առկայություն, որի գումարի չափը գերազանցում է օրենքով նախատեսված շեմը:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն 28.08.2017թ. մասնակցել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՀՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմանը և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն հարկային մարմիններից ստացված եզրակացության համաձայն, ընկերությունն ունեցել է հարկային

պարտավորություն, որի արդյունքում ընկերության հայտը մերժվել է, ինչպես նաև պատվիրատուն դիմել է բանկին՝ ընկերության կողմից հայտի ապահովման գումարը գանձելու համար (նշեմ նաև, որ պատվիրատուն ոչ մի գրավոր արձանագրություն չի ուղարկել մեզ մրցույթի արդյունքների վերաբերյալ, տեղեկությունները ստացել ենք հեռախոսազանգերի միջոցով):

Հայտնում եմ Ձեզ, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 2017թ. օգոստոսի 21-ին 1582055 /մեկ միլիոն հինգ հարյուր ութսուններկու հազար հիսունհինգ/ ՀՀ դրամ գումարը փոխանցվել է հարկային մարմնի համակարգի զարգացման հաշվի համարին՝ 900013202016 /ստուգման ակտի 10%/:

Ընկերությանն անհայտ պատճառներով նշված չափով պարտավորությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից չի մարվել և «Գազկոմշին» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վարման քարտում մնացել է որպես պարտավորություն:

Ընկերության բազմաթիվ ահազանգերից հետո 07.09.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից պատվիրատուն ստացել է ճշտգրտված եզրակացություն, որի համաձայն ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի հարկային պարտավորություն:

Հանձնաժողովի անձանագրությունը և որոշումը կայացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) խախտումներով, ինչը չի բխում գործող օրենսդրության պահանջներից, մասնավորապես, խախտվել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջը:

Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն այն անձիք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացված գնային առաջարկի մինչև 1%, բայց ոչ ավելի, քան 50,000/ հիսուն հազար/ ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գտնում ենք, որ խախտվել է օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, քանի որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային ժամկետանց պարտավորություն չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի «գ» կետով՝ խնդրում են դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2017թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Ընկերության տնօրեն Մաքսիմ Միսակյանը:

2. «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.10.2017թ. թիվ 21/1-1798 գրությամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

««ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից 2017 թվականի օգոստոսի 15-ին հայտարարվել էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հերթապահ մասի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր էին ներկայացրել թվով երեք ընկերություններ:

Սույն թվականի օգոստոսի 28-ին «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված հայտերի գնահատումն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, և նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, սահմանված պահանջներին համաձայն:

«ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.3-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել «Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Հանձնաժողովը սույն թվականի օգոստոսի 28-ին ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի և «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.12-րդ կետի պահանջներով՝ որոշում էր կայացրել հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարության 8.14-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում, Կոմիտեն հրավերի 1-ին մասի 8.12-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրել էր հարցման մասին՝ հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն, առ այն, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 1.581.998 ՀՀ դրամ, ինչը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Հանձնաժողովը սույն թվականի սեպտեմբերի 4-ին N 3 արձանագրության 2-րդ կետի բ) պարբերությամբ որոշում էր կայացրել մերժել Ընկերության հայտը՝ Կարգի 44-րդ կետի՝ «Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեին տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից», ինչպես նաև «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետի պահանջների համաձայն: Նշված արձանագրության 3-րդ կետի ա) ենթակետով Հանձնաժողովը որոշում էր կայացրել նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդ՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին:

Սակայն, 2017 թվականի սեպտեմբերի 7-ին էլեկտրոնային փոստի միջոցով Կոմիտեն ուղարկում է նոր ճշգրտված եզրակացություն (ձև՝ հրավերի Հավելված 8), ըստ որի Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 0 ՀՀ դրամ, միաժամանակ էլեկտրոնային փոստում նշված էր, որ «1,581,998 ՀՀ դրամ պարտք ստուգման ակտի 10 % գումարը վճարվել է 21.08.2017թ.-ին, սակայն վերակազմավորման պատճառով ՀՎՍՎ 20 բաժին տեղեկատվությունը հասել է 06.09.2017թ.-ին»:

Գնման գործընթացը թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպելու և «Գազկոմշին» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի վերաբերյալ Կոմիտեի կողմից տրված վերը նշված երկու եզրակացությունների (Հավելված 8) հիման վրա Ընկերության հայտը գնահատելու վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով հանձնաժողովը 11.09.2017թ.-ին հրավիրված նիստի N3 արձանագրության 3.1-րդ կետի ա) ենթակետով որոշում է կայացնում կասեցնել նիստը և պարզաբանման նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ի պատասխան պարզաբանման՝ 2017 թվականի սեպտեմբերի 29-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվում է պատասխան գրությունը, որի համաձայն «Եթե սահմանված ժամկետում Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա նշված մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կամ Կոմիտեի կողմից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից: Միաժամանակ, հաշվի առնելով Կոմիտեի կողմից տրամադրված ճշտված եզրակացությունը, հայտնում ենք, որ վերոնշյալ մասնակցի տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմնին»: Սույն կարգավորումն առկա է նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետում և «ՀՀ ՈԿ-ԳՀԱԾՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետում:

Այսինքն՝ Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ է, հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համաձայն, և գնահատման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի և «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14-րդ կետի պահանջները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության գրավոր պարզաբանումը»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Զանջուղազյանը:

3. «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի քննության շրջանակներում որպես երրորդ անձ ներգրավված «Արգոհշին» ՍՊԸ-ն 17.10.2017թ. Խորհրդին ուղղված գրությամբ մասնավորապես հայտնել է.

««Գազկոմշին» ՍՊԸ-ն ներկայացրել է բողոք ԿԱ Ոստիկանության «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ և Գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2017թ. N 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի քննության շրջանակներում «Արգոհշին» ՍՊԸ-ն ներկայացրել է միջնորդություն և Խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն ներգրավվել է որպես երրորդ անձ:

Հաշվի առնելով սույն գործի կարևորությունը «Արգոհշին» ՍՊԸ-ի համար՝ ներկայացնում ենք ընկերության դիրքորոշումը ներկայացված բողոքի վերաբերյալ:

Գտնում ենք, որ որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գազկոմշին» ՍՊԸ-ն 28.08.2017թ. մասնակցել է ԿԱ Ոստիկանության «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, որով ներկայացրել է հայտարարություն այն մասին, որ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերջինս ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև պարզվել է, որ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է 1,581,998 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություններ, ինչի հիման վրա մասնակցի հայտը մերժվել է և 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Արգոհշին» ՍՊԸ-ն:

Ընկերությունը բողոքում նշել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ, և հայտը ներկայացնելուց հետո միայն՝ ներկայացրել է 06.09.2017թ. N 1097 տեղեկանքի պատճենը, որի համաձայն ընկերությունը չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, և այդ պատճառով խնդրել է դադարեցնել ընկերության հայտը մերժելու մասին որոշումը, քանի որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը:

Ցանկանում ենք հայտնել, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից վերը նշված պատճառաբանությունը չի բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, քանի որ.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, ինչպես նաև ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը համապատասխանող: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ

տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեին տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Այսպիսով, վերոհիշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ ՀՀ ԿԱ Ոստիկանության «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից չի խախտվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, այլ հակառակը, Պատվիրատուն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով, 44-րդ կետով և «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներով, այն է՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է իրականությանը չհամապատասխանող, և անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից Պատվիրատուն պարտավոր էր առաջնորդվել վերը նշված իրավական ակտերով և մերժել մասնակցի հայտը, այսինքն, բողոքաբերը սխալ է նշել և մեկնաբանել բողոքի իրավական հիմքերը, որպիսի պայմաններում «Գազկոմշին» ՍՊԸ-ի բողոքը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքում նշված Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված հղումների, ապա ցանկանում ենք հայտնել, որ մասնակիցը ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու պատճառով կարող է ներառվել գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ Ոստիկանության «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից չի խախտվել Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված որևէ պահանջ, խնդրում ենք «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ. ներկայացված բողոքը մերժել»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստին մասնակցում էր «Արգոհշին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահրամ Հովհաննիսյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի

09.10.2017թ. թիվ 21/1-1798 գրությունը, «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 28.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2, 04.09.2017թ. ժամը 12:45-ին կայացած նիստի N 3 և 11.09.2017թ. ժամը 15:30-ին կայացած նիստի N 4 արձանագրությունները, «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի պատճենը, 07.09.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից Պատվիրատուին ուղարկված եզրակացությունը, Կոմիտեի ՀՎՍՎ թիվ 20 բաժնի կողմից 06.09.2017թ. Ընկերությանը տրամադրած տեղեկանքը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

«ՀՀ Ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից 15.08.2017թ. հայտարարվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հերթապահ մասի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի շրջանակներում ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Գազկոմշին» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը՝

- 28.08.2017թ. ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 3.1 կետի «ա» ենթակետով որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Գազկոմշին» ՍՊԸ-ին և հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ,

- 04.09.2017թ. ժամը 12:45-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով արձանագրել է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ,

- նույն կետի «գ» ենթակետով որոշել է մերժել «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, այն է՝ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը գերազանցում է Օրենքով նախատեսված շեմը:

- 11.09.2017թ. ժամը 15:30-ի նիստի N 4 արձանագրության՝

- 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից «Գազկոմշին» ՍՊԸ-ի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ 07.09.2017թ. ստացվել է նոր ճշգրտված եզրակացություն (այսուհետ՝ նոր եզրակացություն):

- 2-րդ կետով արձանագրել է, որ ըստ Կոմիտեի նոր եզրակացության ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ մասնակցի ներկայացված հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

- 3-րդ կետով արձանագրել է, որ, հաշվի առնելով, որ 04.09.2017թ. նիստի թիվ 2 որոշմամբ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը Օրենքով նախատեսված շեմը գերազանցելու հիմնավորմամբ, Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Արգոհշին» և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ների կոնսորցիումին:

- 3.1 կետի «ա» ենթակետով որոշել է կասեցնել նիստը և «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ գնահատման համար, պարզաբանման նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

«Գազկոմշին» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ 28.08.2017թ. մասնակցել է «ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված ՀՀՈԿ ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմանը և ճանաչվել առաջին տեղն զբաղեցրած մասնակից, սակայն Կոմիտեից ստացված եզրակացության համաձայն, Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն, ինչի արդյունքում Ընկերության հայտը Հանձնաժողովի կողմից մերժվել է:

Ընկերությունը հայտնել է նաև, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. 1.582.055 ՀՀ դրամ գումարը փոխանցվել է հարկային մարմնի համակարգի զարգացման հաշվի համարին, սակայն Ընկերությանն անհայտ պատճառներով առկա պարտավորությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից չի մարվել:

Ընկերության բազմաթիվ ահազանգերից հետո միայն 07.09.2017թ-ին Պատվիրատուն ստացել է Կոմիտեի ճշտգրտված եզրակացությունը, ըստ որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

Բողոքի քննության նպատակով 05.10.2017թ. Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքն ամբողջությամբ և հավելեց, որ Հանձնաժողովի 04.09.2017թ. ժամը 12:45-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով կայացված որոշումը, ըստ որի «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժվել է հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, այն է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորության առկայությունը, կայացվել է Օրենքի խախտումներով, մասնավորապես, խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել, հետևաբար այդ մասով Ընկերության հայտը համապատասխանել է Հրավերի պահանջներին:

Ընկերության տնօրենը հավելեց նաև, որ Պատվիրատուին Կոմիտեի կողմից ի սկզբանե ուղարկված եզրակացությանը կից ներկայացվել է նաև գրություն այն մասին, որ Ընկերությունը 21.08.2017թ. դրությամբ վճարել է ստուգման ակտի 10 %՝ 1.582.055 ՀՀ դրամ պարտքի գումարը, սակայն Պատվիրատուն այդ հանգամանքը հաշվի չի առել և մերժել է Ընկերության հայտը:

Խորհրդի այն հարցին, թե արդյոք եղել է նման գրություն, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ եզրակացությանը կից ստացվել է նաև MS-excel էլեկտրոնային փաստաթուղթ, որտեղ իսկապես նշված է եղել, որ Ընկերությունը 21.08.2017թ. դրությամբ վճարել է ստուգման ակտի 10 %՝ 1.582.055 ՀՀ դրամ պարտքի գումարը, սակայն նշեց, որ ըստ Պատվիրատուի տվյալ փաստաթուղթը հանդիսանում է Կոմիտեի ներքին աշխատանքային փաստաթուղթ և Պատվիրատուի համար Ընկերության հայտը մերժելու հիմք է հանդիսացել միայն եզրակացությունը:

Խորհրդի պահանջով Պատվիրատուն ներկայացրեց եզրակացությանը կից MS-excel էլեկտրոնային փաստաթուղթը, որի ուսումնասիրությունից պարզվեց, որտեղ նշված էր, որ Ընկերությունը 21.08.2017թ. դրությամբ վճարել է ստուգման ակտի 10 %՝ 1.582.055 ՀՀ դրամ պարտքի գումարը:

Ընկերությունը Խորհրդին ներկայացրեց նաև Կոմիտեի ՀՎՍՎ թիվ 20 բաժնի կողմից 06.09.2017թ. Ընկերությանը տրամադրված տեղեկանքը, որի համաձայն «Գազկոմշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 28.09.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել, իսկ Ընկերության դեբետային մնացորդը (փաստացի գերավճարը) կազմել է 3.162.037 ՀՀ դրամ:

Պատվիրատուի ներկայացուցիչը հաստատեց նաև, որ 07.09.2017թ. էլեկտրոնային փոստի միջոցով Կոմիտեից ստացել է նոր ճշգրտված եզրակացություն՝ Հրավերի 8-րդ Հավելվածի ձևով, ըստ որի Ընկերության կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմել է 0 (զրո) ՀՀ դրամ՝ նշումով, որ 1,581,998 ՀՀ դրամ պարտք ստուգման ակտի 10 % գումարը վճարվել է 21.08.2017թ.-ին, սակայն վերակազմավորման պատճառով ՀՎՍՎ 20 բաժին տեղեկատվությունը հասել է 06.09.2017թ.-ին:

Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց, որ, ըստ Կոմիտեից ստացված ճշգրտված եզրակացության, «Գազկոմշին» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա՝ 28.09.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել՝ մինչև նախ ժամանակ նշելով, որ Ընկերության հայտը մերժելու որոշումը ընդունելիս Հանձնաժողովը ղեկավարվել է ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետով, ինչպես նաև Հրավերի 8.14-րդ կետով պահանջներով, որոնց համաձայն՝ եթե սահմանված ժամկետում Կոմիտեից տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Պատվիրատուի ներկայացուցիչը պնդեց, որ Հանձնաժողովի կողմից կայացված որոշումը եղել է իրավաչափ, հայտերը գնահատվել են հրավերով սահմանված կարգով ու Օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, և գնահատման արդյունքում Ընկերության հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի, Կարգի 44-րդ կետի և «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14-րդ կետի պահանջները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր պարզաբանումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն (...): Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.14 կետի համաձայն՝ Կոմիտեն հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն(...): Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Խորհուրդը՝ 09.10.2017թ. N ԳԲԽ-ԷՍ-2017/39 ծածկագրով բողոքի քննության շրջանակներում որոշում ընդունելու նպատակով, հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. հարկային մարմնի համակարգի զարգացման հաշվի համարին փոխանցված գումարի մասին տեղեկատվությունը ՀՎՍՎ 20 բաժին ուշացումով հասնելու պատճառների վերաբերյալ տեղեկատվություն:

Ի պատասխան Խորհրդի վերը նշված հարցմանը՝ Կոմիտեն 11.10.2017թ. թիվ 03/70-20/40959-17 գրությամբ Խորհրդին տեղեկացրել է, որ Ընկերության կողմից 21.08.2017թ. վճարված 1.582.055 դրամ գումարի (ստուգման ակտի 10%) վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ ԿԱ ՊԵԿ Ֆինանսահաշվային վարչության կողմից ՀՎՍՎ 20 բաժնին տրամադրվել է

«Outlook» համակարգի միջոցով 06.09.2017թ.-ին, որից հետո կատարվել է համապատասխան գրանցում «Հարկատու 3» համակարգ:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. իր պարտավորությունների մարման նպատակով փոխանցված 1.581.998 ՀՀ դրամ ստուգման ակտի 10 % գումարի վճարման մասին տեղեկատվությունը ՀՎՍՎ 20 բաժին հասել է ուշացումով, ինչի հետևանքով Ընկերության հայտը ներկայացնելու օրվա՝ 28.08.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Ընկերության ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորությունը չի մարվել, ինչը Ընկերության կողմից չէր կարող կանխատեսվել:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի 04.09.2017թ. ժամը 12:45-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ, այն է՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորության առկայությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝ 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և նույն օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ նույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել, հետևաբար, Ընկերության հայտն այս մասով համապատասխանել է Հրավերի պահանջներին, այսինքն, Ընկերությունն, ըստ էության, ապահովել է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքի հետ կապված՝ Օրենքի, որպես ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտի, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված չափանիշին համապատասխանելու պահանջի կատարումը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի և «Արգոնշին» ՍՊԸ-ի կողմից վկայակոչված՝ Կարգի 44-րդ կետի, ապա Խորհուրդը գտնում է, որ Բողոքով քննվող իրավիճակը որոշակիորեն տարբերվում է նշված կետով սահմանված դեպքերից, քանի որ վկայակոչված նորմով նախատեսվել են այն դեպքերը, երբ մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում Կոմիտեի՝ վերջինիս պահանջով իրեն տրամադրած տեղեկատվությունը, որը տարբերվում է հանձնաժողովի՝ Կոմիտե ներկայացված հարցմանն ի պատասխան ստացված եզրակացության մեջ պարունակվող տեղեկատվությունից:

Տվյալ դեպքում Կոմիտեն՝ հաշվի առնելով «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 21.08.2017թ. հարկային մարմնի համակարգի զարգացման հաշվի համարին փոխանցված գումարի մասին տեղեկատվությունը ՀՎՍՎ 20 բաժին ուշացումով հասնելու փաստը՝ Պատվիրատուին է ներկայացրել իր իսկ կողմից ճշգրտված եզրակացությունը (Հավելված 8)՝ միաժամանակ նշելով նախորդ եզրակացությամբ ներկայացված տեղեկատվության սխալ լինելու պատճառը, այսինքն, ըստ էության, ընդամենը շտկել է իր գործառույթի իրականացման ընթացքում թույլ տրված վրիպակը:

Միաժամանակ, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելով՝ կատարել է Կարգի 44-րդ կետով, ինչպես նաև «ՀՀ ՈԿ-ԳՀԱՇԶԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.14-րդ կետով սահմանված պահանջները, այսինքն, գործել է իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Գազկոմշին» ՍՊԸ-ի կողմից 29.09.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Դադարեցնել ՀՀ ՈԿ-ԳՀԱՇՁԲ-17/3» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2017թ. թիվ 3 արձանագրության 2-րդ կետի «գ» ենթակետով «Գազկոմշին» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ